

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 35/3

26 դեկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց «Կոմսալ» ՍՊԸ 05.12.2014 թ-ի վարչական բողոքը ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ կողմից 19.08.2014թ. թիվ 1009650 ակտով առաջադրված պարտավորությունների գանձմանն ուղղված գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու վերաբերյալ:

«Կոմսալ» ՍՊԸ բողոքում բերված փաստարկները.

19.08.2014թ. կազմվել է ստուգման թիվ 1009650 ակտը (այսուհետ՝ Ակտ), որով «Կոմսալ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) առաջադրվել են լրացուցիչ հարկային պարտավորություններ: 28.08.2014թ. Ընկերությունը վիճարկման հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան, որը 04.09.2014թ. որոշմամբ ընդունվել է վարույթ:

18.09.2014թ. ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ պետի կողմից որոշում է կայացվել «Կոմսալ» ՍՊԸ-ից Ակտով արձանագրված լրացուցիչ հարկային պարտավորության գումարը՝ 24.232.190 ՀՀ դրամը, գանձելու մասին (այսուհետ՝ Որոշում):

Ընկերությունը 29.09.2014թ. դիմել է հարկային տեսչություն խնդրելով հայտնել, թե 20.08.2014թ դրությամբ Ընկերությունը ԱԱՀ-ի և շահութահարկի գծով ինչ հարկային պարտավորություններ է ունեցել (ներառյալ՝ գերավճարների) և արդյոք որևէ հարկատեսակի գծով Ընկերության գերավճարների գումարները ուղղվել են Ակտով առաջադրված պարտավորությունների մարմանը (վճարմանը), թե ոչ: Ի պատասխան 29.09.2014թ. գրությունը 08.10.2014թ. տեսչությունը հայտնել է, որ Ակտով առաջադրված պարտավորությունների 15.050.572 ՀՀ դրամը մարվել է ընկերության անձնական հաշվի քարտում առկա գերավճարի հաշվին:

Ընկերությունը Ակտի գումարի գանձման մասին Որոշումը գանգատարկել է ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով), որը 25.11.2014թ. թիվ 30/3 որոշմամբ կասեցրել է Ակտի և Որոշման հիման վրա հարուցված վարչական վարույթը:

Ընկերությունը գտնում է, որ հարկային քարտում առկա գերավճարի գումարները Ակտով առաջադրված լրացուցիչ հարկային պարտավորությունների մարման գործողությունները ոչ իրավաչափ են, հետևյալ պատճառաբանությամբ՝

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը, մինչև այդ գործով գործն, ըստ էության, լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը.....:

Ընկերությունը 28.08.2014թ. վիճարկման հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան, որը 04.09.2014թ. որոշմամբ ընդունվել է վարույթ: Վերոշարադրյալ իրավական նորմի բովանդակությունից պարզ է դառնում, որ սույն դեպքում Ակտի կատարումը պետք է կասեցվեր: Այսինքն, դրանով չէր կարող

հարկային պարտավորության գումարի գանձմանը կամ կատարման ապահովմանն ուղղված որևէ գործողություն կատարվել:

Վարչական մարմինը անտեսել է այն հանգամանքը, որ Ակտի վիճարկման փաստն արդեն իսկ նշանակում է, որ այն չի կարող դրվել որևէ այլ վարչական ակտի կամ գործողության հիմքում: Տվյալ դեպքում հարկային տեսչությունն իրավասու չէր Ընկերության հարկային քարտում առկա գերավճարի գումարները ուղղել Ակտով նախատեսված լրացուցիչ հարկային պարտավորությունների մարմանը:

Վերը նշված փաստերի և իրավական հիմնավորումների հաշվառմամբ Հանձնաժողովը թիվ 30/3 որոշմամբ արձանագրել է, որ Ակտի հիման վրա հաշվի առնելով դրա դատական կարգով վիճարկելու փաստը, չի կարող իրականացվել վարչարարություն: Մինչդեռ հարկային մարմինն անտեսելով վերը նշվածն իրականացնում է Ակտի գումարի գանձման գործողություններ՝ դրսևորելով ակնհայտ ոչ իրավաչափ վարքագիծ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ գլխով Ընկերությունը խննդրում է ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ կողմից 19.08.2014թ. թիվ 1009650 ստուգման ակտով առաջադրված լրացուցիչ հարկային պարտավորությունների գումարների գանձման (մարման) գործողությունները ճանաչել ոչ իրավաչափ և ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ-ին պարտավորեցնել ձեռնպահ մնալ Ակտով առաջադրված պարտավորությունների գանձմանն ուղղված գործողություններ կատարելուց:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ կողմից «Կոմսալ» ՍՊԸ-ում իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում, կազմվել է ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ 19.08.2014 թ-ի թիվ 1009650 ակտը, որով առաջադրվել են լրացուցիչ պարտավորություններ:

«Կոմսալ» ՍՊԸ կողմից ՀՀ վարչական դատարան է ներկայացվել հայցադիմում ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ 19.08.2014 թ-ի թիվ 1009650 ակտը մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասին: ՀՀ վարչական դատարանի 04.09.2014 թ-ի թիվ ՎԴ/4568/05/14 որոշման համաձայն ընկերության հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Նշվեց նաև, որ «Կոմսալ» ՍՊԸ կողմից ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ 19.08.2014 թ-ի թիվ 1009650 ակտով առաջադրված լրացուցիչ պարտավորությունները սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով, ընկերության անձնական հաշվի քարտերում առկա գերավճարի գումարները ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ կողմից ուղղվել են Ակտով առաջադրված պարտավորությունների մարմանը:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Վերոգրյալ իրավանորմի դրույթներից հետևում է, որ ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ 19.08.2014 թ-ի թիվ 1009650 ակտը «Կոմսալ» ՍՊԸ կողմից դատական կարգով վիճարկվելու պայմաններում Կոտայքի ՏՀՏ-ին անհրաժեշտ է ձեռնպահ մնալ ակտի կատարմանը ուղղված գործողություններից, մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը: Նշված հանգամանքն իր հերթին վկայում է այն մասին, որ ընկերության անձնական հաշվի քարտերում առկա գերավճարի գումարները, որոնք ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ կողմից ուղղվել են Ակտով առաջադրված պարտավորությունների մարմանը, ենթակա են վերահաշվարկման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Ղ Ո Ւ Մ Է՝

«Կոմսալ» ՍՊԸ 05.12.2014 թ-ի վարչական բողոքը բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ